

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ

/Ա. Արսլանի վեպերի հիման վրա/

*Հորաքոյրս միշտ կրկնում էր.
«Երբ չարութիւն անէք եւ ինձ հոգնեցնէք,
Կգնամ Բեյրութ՝ Արուսեակի մօտ,
Հայէպ՝ Ջարեհ հօրեղբօր մօտ, Բօստոն՝ Ֆիլիպի եւ
Միլդրիթի, Ֆրեզնո՝ քրոջս՝ Նուարդի կամ
Նիւ Եորք՝ Անիի, կամ էլ Կոպակաբանա՝
գարմիկիս՝ Միշելի մօտ:
Բայց նրա մօտ՝ ամենավերջում,
Քանի որ ասորու հետ է ամուսնացել »:*

«Զմյուռնիայի ճանապարհը» գրքի դարձերեսին սևով կարմրի վրա գրված է այս պատմությունը, որը աշխարհով մեկ սփռված հայերի ճակատագրի խտացումն է, վավերագիրը: Վերապրող սերունդը արյան հիշողությամբ անվերջ պատմում է իր տոհմի պատմությունը՝ շարունակ վերադառնալով իր արմատներին:

Մեր ներքին արթնացման համար կարևոր է, թե ով ենք մենք և ուր ենք գնում: Հայի մտքի վերջին հեքիաթը չի ավարտվում այսօր էլ:

Զմյուռնիայի ճանապարհը Գողգոթայի ճանապարհ է եղել, և հայերն անցել են այդ ամենի միջով՝ Հիսուսի խաչը շալակած: «Փոքր երեխաները ապաստանում էին մեծերի հետևում, իսկ մեծերը խղճուկ դեռահասներ էին՝ խուզած գլուխներով, թերսնված, կոլովված ինչ-որ ընդարձակ հագուստի, ինչ-որ թշվառ բաճկոնի մեջ, լայն բացած խոշոր հայկական աչքերով, որտեղ, ինչպես ծանծաղ ջրում արտացոլված էին անհետացած դեմքեր, տներ, ընտանիքներ»¹:

Եվ հիմա հարկավոր է դիմակայել՝ հիշելով ջրերից հառնած ու երկինք հասած լեռները...

Եթե մեռած հայերի վերջին մտքերը շարունակ մրմնջան՝ Հայաստան, նրանց մրմունջը կարող է երկրի սահմաններից դուրս թափանցել և ամենուրեք լսելի դառնալ, մեծագույն մրմունջ կբարձրանա, եթե բոլոր նրանք, ովքեր զոհ են եղել այս աշխարհում, հանկարծ սկսեն իրենց մրմնջացող գանգատները հաղորդել, ամբողջ աշխարհը կխելագարվի այդ մրմնջոցից: «Բայց այդ էր նրանց երկիրը, կողոպտված ու քանդված տներ, հրաշագործ եկեղեցիներ, ամենուր մահվան ստվերներ, լքված այգիներ, ախոռների վերածված պարտեզներ ու քրտնաջան աշխատանք, ու թուրքեր, որոնց այլևս չէր կարելի վստահել: Բայց այդ էր նրանց երկիրը,

¹ Տե՛ս *Անտոնիա Արսլան*, *Արտոյտների ազարակը*, Գիրք 2, *Զմյուռնիայի ճանապարհը*, Եր., 2012, էջ 141:

կորուսյալ հայրենիքը, այնտեղ էին նրանց ակունքները, արևալից օրերի լույսը, հոգու հացն ու գինին»²:

Անտոնիա Արսլանը «Զմյուռնիայի ճանապարհը» վավերագիր մատյանում գրում է. «Երբեմն մեռնելն այնքան պարզ բան է...»³: Մինչդեռ անհրաժեշտ էր «մի որևէ բան անել, որը հաղթական վախճանի կհասցներ բռնությամբ տեղահան արված մարդկանց աղետալի արկածային վերադարձը, որը հետք կթողներ նրանց հիշողության, պատմության մեջ, ովքեր այժմ ժառանգելու էին արքայությունը, ոսկյա հարթավայրերը, ովքեր ճիշտ ցեղից էին ու կրոնից»:

Վեպի կիզակետը գաղթականների օրոքն է՝ աքսորի ժամանակ գրված և վերապրածների կողմից հաճախ տարբերակներով փոխանցված երգերից մեկը.

Տեր Զօր կերթանք լալագին,

Ցավերուն մեջ կրակին,

Չկա լույս ճաճանչի,

Ցավրուկս, նանիկ կկանչեմ⁴:

Զմյուռնիայի ճանապարհը բռնած մարդկանց ճակատագիրն առնչվում է մեզանից յուրաքանչյուրին: Թողնելով իր շեն օջախը՝ հայր իրականում հոգին թողնում է այնտեղ, իսկ գաղթի ճամփեքին ընդամենը նրա բզկտված մարմինն է: Եվ յուրաքանչյուր հայ մյուսի մեջ տեսնում է մի խորհրդավոր գեղեցկություն, այն կորած աշխարհի կախարդանքը, որ միայն ինքը գիտի...

«Կարծես նախնիները անընդհատ իրենց ետ էին կանչում, նրանց տները քանդված էին, իսկ ամենագեղեցիկները տարիների ընթացքում զբաղեցրել էին թուրքերը, որոնք քաջ գիտեին ճշմարտությունը, բայց իրականում միտք չունեին հեռանալու, սակայն վերադարձող հայերը վարժված էին կիսատ-պռատ ապրելու, հեզ ու խոնարհ, ամեն օր շնորհակալություն էին հայտնում, որ դեռևս ողջ են, այնպես որ լռում էին և գլխի ճարը տեսնում, առաջարկում էին իրենց որպես ինամակալ կամ օգնական՝ փոխարենը գոհանալով գլուխը դնելու մի անկյունում մահճակալի վրա՝ այն տան տանիքի տակ, որը ժամանակին իրեն էր պատկանել»⁵:

Այս ամենից հետո պարզն է, թե՞ պատիժ էր վերապրողների կյանքը, ինչպես գաղթի ճամփան քրքրված ոտքերով անցած Վարդուհու հավերժական հարցը՝ «Որդիս քեզ մո՞տ է: Իսկնեն երբեք չէր պատասխանում: Առնում էր նրա դողացող ձեռքերը իր ձեռքերի մեջ, մոտեցնում դեմքին՝ փոխանցելով խեղճ խենթին խաղաղություն և համբերություն: Ապա գրկում էր աղջկան և ողբասացների հնամենի դեմքով անեծքներ թափում, հրամաններ արձակում այնքան ժամանակ, մինչև որ արցունքի լճի մեջ ուժասպառ Վարդուհին քուն էր մտնում: Բոլորը սիրում էին այլալված դեմքով, լլկված ու լքված այս կնոջը, որը կարծես կրում էր իր մեջ Մայր Հայաստանի տառապանքը»⁶:

² *Անտոնիա Արսլան, նշվ. աշխ., էջ 159:*

³ *Նույն տեղում, էջ 169:*

⁴ *Նույն տեղում, էջ 130:*

⁵ *Նույն տեղում, էջ 147:*

⁶ *Նույն տեղում, էջ 132:*

Բոլոր դեպքերում այս վեպի առանցքային գաղափարը հայ մարդու ճակատագրի ֆեոդալներն է ու պատմությունը: Ճակատագրի և լինելության այս մատյանում վավերագրերը սովոր մաս են գրավում, գեղարվեստականությունը, ըստ էության, դառնում է մասնավոր խնդիր: Տասնյակ հազարավոր գերեզմանաթմբերի փոխարեն մնացել են վավերագրերով լեցուն արկղեր:

«Արտությունների ագարակում» Անտոնիա Արսլանն ընդգծում է զոջման բացակայությունը, կատարյալ ստոնասրտությունը այդ հարցի անդրադարձներում նաև հետագայում. հենց սա է վեպի կիզակետը: Ասել է թե՛ մարդ էակն է՛լ ավելի է հեռացել դեպի ապամարդկայնացման խորխորատները, յուրաքանչյուր չբացահայտված ու չդատապարտված ոճիր շարունակելի է: Վեպի այսպիսի «բաց» տարածքը թույլ է տալիս ժամանակային տարբեր կտրվածքների ու տոհմաձառի տարբեր սերունդների գերակայություն: Վեպում կարևոր է հանդուրժելու անհրաժեշտությունը, մինչև որ կարողանաս հարվածին հարվածով պատասխանել, ներել, բայց չմոռանալ երբեք: Սա պատգամ է և ուղերձ՝ ուղղված սերունդներին: Պատահական չէ, որ ցեղասպանությունը որակվել է որպես մարդկային անհատականության փլուզում:

Բռնության հիշողությունը երբեք չի լքում վերապրողների սերնդին: Շատերն անկարող եղան դիմանալու հիշողության ցավին ու կտտանքներին, թանկագին կորուստների և բռնության սերմը կրելու ահավոր գիտակցությանը: «...Զարեհը այդ օրերին հաճախ էր մեկուսանում ավագ եղբոր հետ, սակայն ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը որևէ բան չէին խոսում անցած-գնացածի մասին, մտախոհ դեմքով ավարտում էին իրենց մշակված քաղաքավարի գրույցները, թեև Թերեզան պատրաստի պատճառաբանությունը միշտ գրպանը դրած շարունակ հետ ու առաջ էր անում ամուսնու աշխատասենյակի փակ դռան առջև, բայց նրան երբեք չհաջողվեց ինչ-որ խոսակցության պատառիկ որսալ. փոքր-ինչ ավելի բարձր ձայն, վճռական կամ հաստատուն կամ լսելի երկխոսություն»⁷: Դեպքերի դժբախտ բերումով ու ճակատագրի քմայքով շարունակ առնչվում ենք բռնությունների՝ տարիների ընթացքում կորցնելով տոհմաձառի սաղարթախիտ ու բեղուն ճյուղերը:

Աշխարհը պարտավոր է իմանալ, թե ինչ է կատարվել 1915 թ.-ին Արևմտյան Հայաստանում, այլապես այդ հրեշավոր եղեռնագործությունը ենթակա է կրկնվելու, ինչը տեսնում ենք մեր օրերում ևս: Պատմական հիշողությունը շարունակ շաղափում է գիտակցության խորքերը նույն սարսափները վերապրելու իմաստով, քանի որ, ինչպես Անտոնիա Արսլանն է ասում, «Մեծ պատմությունը ևս մեկ անգամ ոչնչացրեց սովորական մահկանացուների պատմությունները»:

Երբ մեծ աշխարհում ինչ-որ տեղ հայեր էին հանդիպում, գրույցի թեման ավարտվում էր ողջերով, քիչ ողջերով ու զոհերով, շատ զոհերով: Բոլորը պատմում էին իրենց ողբերգությունն ու ողբում ուրիշներինը: Կարծես երբևէ հայերը չէին հոգնում մահվան ու գոյատևման պատմություններից, երբեք չէին հոգնում կրկնվող սարսափներից, կարծես կիսված վիշտը շատ ավելի տանելի էր,

⁷ *Անտոնիա Արսլան, էջ 215:*

երբ դառնում էր պատմություն, առասպել՝ շաղախված նահատակված ժողովրդի կյանքով, որն իր հանգուցյալների դյուցազներգության մեջ էր գտնում փրկագինը⁸:

Այս տխուր պատմության զոհերը սհա այստեղ են՝ մեր մեջ: Նրանք միայն մոխիր ու փոշի չեն, ինչպես պնդում են շատերը. նրանց շունչը շարունակում է մեզ մղել առաջ...

ГЕНОЦИД: ТРЕТЬЕ ПОКОЛЕНИЕ

(на основе романов А.Арслан)

___ Резюме ___

___ К. Саакян ___

Статья посвящена социально-психологическим последствиям геноцида, которые проявились в умственно-психической характеристике и формах поведения третьего поколения, пережившего геноцид. Исследование проведено на основе книг А.Арслан “Ферма жаворонок” и “На дороге Змюрнии”, которые являются сгустками судьбы рассеянного по всему миру армянского народа. Стержневая идея романов – феномен судьбы и истории армянина, а целевая задача - чтобы весь мир узнал о содеянном в 1915 г. в Западной Армении, иначе это чудовищное преступление может повториться, что мы наблюдаем и в наши дни.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մահակյան Գարինե Արամի –հ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊՄԻ հոգեբանության սմբիոն, E-mail: sahakyanani@mail.ru

⁸ Անտոնիա Արսլան, նշվ. աշխ., էջ 170: